ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-720-02.09.2020-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն		Նախագիծն առաջարկվում է հանել փաթեթից և շրջանառությունից, քանի որ նախագիծը նախապատրաստվել էր «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, սակայն դրույթն արդեն ուժի մեջ է մտել, հետևաբար անհրաժեշտ է փոփոխությունը նախատեսել միայն հիմնական ակտում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրեսգրքում:	Ընդունվել է: ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հանվել է փաթեթից և շրջանառությունից:	Ընդունվել է

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-720[1]-02.09.2020-ՊԱ-011/0)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 2.	Լրացնել նոր կետ, որով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 123.5-րդ հոդվածի 5-րդ մասի սանկցիան կշարադրվի հետևյալ նոր խմբագրությամբ: «առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 2-րդ կետով :	Ընդունվել է
			Նախագիծը լրացնել նոր 5-րդ հոդվածով, որով Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան կշարադրվի հետևյալ նոր խմբագրությամբ: «առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:»:	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է նոր 5-րդ հոդվածով: Նախագծի համարակալումը համապատասխանաբար փոփոխվել է:	Ընդունվել է
			Նախագիծը լրացնել նոր 7-րդ հոդվածով, որով օրենսգրքի 264-րդ հոդվածի 4-րդ մասը կշարադրվի նոր խմբագրությամբ. «Այնպիսի խախտում կատարելու դեպքում, որի համար սույն օրենսգրքին համապատասխան կարող է վարչական տույժ նշանակվել տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու ձևով, վարորդից վերցվում է վարորդական վկայականը մինչև գործի վերաբերյալ որոշում կայացնելը և տրվում է տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն, որի մասին նշում է կատարվում իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ:	Ընդունվել է: Նախաիծը լրացվել է նոր 7-րդ հոդվածով :	Ընդունվել է

			Տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու որոշում կայացնելու դեպքում վարորդական վկայականը չի վերադարձվում: Սույն օրենսգրքի 123, 1231, 1233 հոդվածներով, 1234 հոդվածի առաջին և երկրորդ մասերով, 1235, 123.6, 123.7, 124, 1241, 1242, 1243, 1244, 1245, 1246, 125, 126 և 129.2 հոդվածներով նախատեսված իրավախախտում կատարած Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող անձանց վարորդական վկայականները վերցվում են մինչև գործով կայացված որոշման կատարումը՝ տալով տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն, որի մասին նշում է կատարվում իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ: Ժամանակավոր թույլտվության գործողությունը երկարաձգվում է մինչև գանգատարկման համար սահմանված ժամկետի լրանալը, կամ գանգատի առթիվ որոշման ընդունումը:»:		
			Նախագիծը լրացնել 9-րդ հոդվածով, որով օրենսգրքի 315-րդ հոդվածը կլրացվի նոր 6-րդ մասով հետևյալ խմբագրությամբ. «Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու մասին տեղեկատվությունը վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանում մուտքագրելուն զուգահեռ միջոցներ է ձեռնարկվում վարորդական վկայականը և նրան կից կտրոնը վերցնելու համար, եթե վարորդը զրկված է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան լրացումը (փոփոխ. 9-րդ հոդված):	Ընդունվել է
		Հոդված 7.	Նախագծի վերջին՝ 7-րդ հոդվածը հանել, փոխարենը լրացնել Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ սահմանող 10-րդ հոդված՝ հետևյալ խմբագրությամբ. «*Հոդված 10.* Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում	Ընդունվել է: Նախագծում լրացվել է Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ սահմանող 10-րդ հոդվածը: Նախագծի 7-րդ հոդվածը հանվելէ :	Ընդունվել է

			պաշտոնական հրապարակման օրը: 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված տուգանային միավորը, որպես վարչական տույժ, կիրառվում է միայն «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով քննության ենթակա գործերով: 3. 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրը՝ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով քննության ենթակա չհանդիսացող գործերով հանված տուգանային միավորները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վերականգնվում են: 4. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, 5-րդ, 7-րդ հոդվածի 1-ին մասը և 9-րդ հոդվածները գործում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը:»:		

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ